**Կարծիք**

**Ժ.01.06 «Ժուռնալիստիկա» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը հայցող Մարիաննա Տիգրանի Հակոբյանի «ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԲԱՆԱՎԵՃԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԵԹԵՐՈՒՄ (2003-2021 թթ.)» ատենախոսության մասին**

Մարիաննա Տիգրանի Հակոբյանի ատենախոսությունը նվիրված է ՀՀ նախընտրական հեռուստաբանավեճի արդիական թեմատիկային: Աշխատանքն ունի միջառարկայական բնույթ, կարող է հետաքրքրել ինչպես լրագրության, քաղաքագիտության, սոցիոլոգիայի, ՀՀ նորագույն պատմության ոլորտների մասնագետների, այնպես էլ վերոհիշյալ գիտակարգերի հատման տիրույթներում ուսումնասիրություններ իրականացնող հետազոտողների: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, առաջարկություններից և օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության մեջ համաչափ արտացոլված են խնդրին առնչվող պատմական, տեսական և գործնական ասպեկտները:

Առաջին՝ «ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԲԱՆԱՎԵՃ. ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ» գլխում ատենախոսը անդրադարձել է թեմատիկայի պատմական ասպեկտներին, ներկայացրել ինչպես հեռուստաբանավեճի մշակույթի, այնպես և ինքնին բանավեճի, իբրև խոսքի արվեստի կայացման ընթացքը:

Երկրորդ՝ «ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԲԱՆԱՎԵՃԻ ՀԱՐԱԲԱՂԱԲԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ» տեսական գլխում հեղինակը կատարել է ատենախոսության համատեքստում քննվող եզրույթների, հասկացությունների, սահմանումների և գործիքակազմի հստակեցում:

Երրորդ՝ «ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԲԱՆԱՎԵՃԸ ՀՀ ՀԵՌՈՒՍՏԱԵԹԵՐՈՒՄ» գլխում ատենախոսը անդրադարձել է Հայաստանի նորագույն պատմության ընթացքում կազմակերպված հեռուստաբանավեճերին, ուսումնասիրության թեմատիկայի գործնական հարթությանը: Կարծում ենք սույն գլխի վերնագրի ընտրության հարցում կարելի էր գտնել համապատասխան լուծումներ, որպեսզի այն գրեթե նույնությամբ չկրկներ ամբողջ ատենախոսության վերնագիրը:

«Եզրակացություններ» բաժնում ի մի են բերվում ուսումնասիրության արդյունքները, «Առաջարկություններ» բաժնում ներկայացված են հետաքրքիր և արժեքավոր դիտարկումներ իսկ գրականության ցանկում արտացոլվում են աշխատանքում օգտագործված լայն գիտական սպեկտրի հետազոտություններ:

Ատենախոսի հրատարակած հոդվածները լիովին արտացոլում են աշխատոնքում ներկայացված դրույթները:

Անհրաժեշտ ենք համարում նշել նաև աշխատանքում առկա որոշ թերություններ:

ա) Հետազոտության մեթոդաբանական հիմքերը շարադրելիս հեղինակը հիմնականում թվարկում է վերլուծական մեթոդներ, սակայն կիրառվել է նաև համադրական մեդոդաբանություն, ինչն անհրաժեշտ է ժամանակակից գիտակարգի չափորոշիչներին համապատասխանելու համար:

բ) Ատենախոսության մեջ առկա առանձին հիմնադրույթներ, որոնք վերաբերվում են հարակից գիտակարգերին, ցանկալի կլիներ ավելի հստակեցնել և գուցե ներկայացնել դրանց վերաբերվող այլ տեսակետներ (մասնավորապես, Հին Հունաստանում բանավեճի, իբրև ճշմարտության բացահայտելու միջոցի արժևորման ոչ միայն սոփեստների դիրքորոշումը):

գ) Աշխատանքում առկա են որոշակի տեխնիկական բնույթի թերություններ:

Վերոհիշյալ թերությունները բնավ չեն ստվերում ատենախոսի կատարած աշխատանքի արժեքը, թեմային առնչվող պատմական ու տեսական նյութի իմացությունը: Աշխատանքը բավարարում է թեկնածուական ատենախոսությանն առաջադրվող պահանջներին, ուստի միջնորդում ենք Երևանի պետական համալսարանում գործող 012 մասնագիտական խորհրդին՝ Մարիաննա Տիգրանի Հակոբյանին շնորհելու իր հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը:

**Պաշտոնական ընդդիմախոս՝ Արման Ալեքսանդրի Սաֆարյան**

**բ.գ.թ., Ռուս-Հայկական համալսարանի ավագ դասախոս**

**12.06.2025**

**ԱԱ Սաֆարյանի ստորագրությունը հաստատում եմ՝**

**Ռուս-Հայկական համալսարանի գիտական քարտուղար՝ բ.գ.թ. Կասաբաբովա Ռ.Ս.**